ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N--- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ՀՈՂԻ ԵՎ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևանի ենթակայության «Հողի և ունեցվածքի գործառնություններ» փակ բաժնետիրական ընկերությունը (գտնվելու վայրը՝ 0010 ՀՀ, ք. Երևան, Փ. Բուզանդի 1/3, գրանցման համար՝ 264.140.02367)։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀՈՂԻ ԵՎ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) իրականացնում է շենք-շինությունների հասցեների տրամադրման և հողօգտագործողների հետ պայմանագրերի կնքման ծառայություններ, որի մասով ֆինանսական միջոցների մուտքերը կազմում են շուրջ 120.0 մլն. դրամ, կամ ընդհանուր մուտքերի 95.0%-ը: Հասցեների տրամադրման ծառայությունների գծով՝ համաձայն Երևանի քաղաքապետարանի և Ընկերության միջև կնքված ծառայությունների ձեռքբերման պայմանագրի, 2017թ. Երևանի բյուջեից հատկացվել է 100.0 մլն. դրամ (Ընկերության ֆինանսական մուտքերի 75%-ը), իսկ 2018թ. 112.5 մլն. դրամ, որից միայն ԱԱՀ-ի գծով, հատկացումները կազմել են համապատասխանաբար 16.7 և 18.8 մլն. դրամ:

Ընկերության հաստիքացուցակով նախատեսված է 40 միավոր՝ 6.03 մլն. դրամ ամսական աշխատավարձի ֆոնդով, կամ տարեկան 72.4 հազ. դրամ: 2018թ. եկամուտների և ծախսերի նախահաշվով նախատեսվել է 78.3 մլն. դրամ ծախս, ինչը կազմում է ընդհանուր ծախսերի գերակշռող մասը՝ 78.4 %: Գործող հաստիքների 14 միավորը կազմում է վարչական անձնակազմի մասը, իսկ ամսական ֆոնդը 2.4 մլն. դրամ:

Երևան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի միավորներին հասցեներ տրամադրելու լիազորությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման հավելվածի 48-րդ կետի, վերապահված է Երևանի քաղաքապետին, իսկ համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի՝ Երևանի քաղաքապետը իր գործունեությունը կազմակերպում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի միջոցով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է նշված լիազորությունները իրականացնել աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության աշխատակիցների միջոցով, ինչը հնարավորություն կտա խնայելու Երևանի բյուջեից հատկացվող գումարները:

Երևանի ավագանու քննարկմանը ներկայացված մեկ այլ նախագծով նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը նշված վարչության մասով ավելացնել 10 միավորով: Նշված 10 միավորի ամսական աշխատավարձի ֆոնդը կազմելու է՝ 2.184.000 դրամ կամ տարեկան 26.208.000 դրամ:

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Ընկերության հետագա գործունեությունը դառնում է ոչ նպատակահարմար:

Ելնելով վերոգրյալից՝ ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀՈՂԻ ԵՎ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Հողի և ունեցվածքի գործառնություններ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀՈՂԻ ԵՎ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Հողի և ունեցվածքի գործառնություններ» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեում էական փոփոխություններ չեն նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ